լանցանքների տեսակէտից. այդպիսով մենք կը ստանայինք օրէնքներ, որոնք վերաբերում են կեանքի դէմ ուղղած լանցանքներին, պատի դէմ, սեփականութեան դէմ և այլն. Բայց կրկնում եմ, այսպիսի պակասութիւններ միայն տեղ տեղ են պատահում. Նիւթին որոշ սիստեմատը՝ անա այս հնդինակութիւնների արժանիքներից մէկը. դրանց մի ուրիշ արժանիքը, առանձին Բիլոֆինը, կայանում է նրանում, որ նրանք տալիս են մեզ հայկական իրաւունքի պատմութիւնը Լեհաստանում.

Բ.

ՀՈՒԲԷՐ, Լ., *Թարգմանութեամբ Հ. Մեսրոպ Վ. Մաղիկեանի, Մխիթարեան ուխտէն.—«ԴԷՊԻ ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳԼՈՒԽ»։ Վիեննա, Մխիթարեան տպարան, 1891 թ. ութածալ, 48 երես, տառ № 10, գինն է 35 սանտիմ (15 կոպ.)։*

Սա մի կարճ, բայց և շատ ամփոփ և կենդանի լեզուով պատմած նկարագիր է ճանապարհորդութեան Նորուեգիայի Դրոնթհայմ քաղաքից սկսած մինչ նոյն երկրի ամենահիւսիսային ծայրը (Հիւսիսային Գլուխը)։ Ճանապարհորդութիւնը տեւում է չորս օր և չորս օր էլ վերադարձ—ընդամենը ութ օր։ Անարկան արժանի է նկարագրութեան, որովհետև այդ չորս օրուայ նաւարկութեան ընթացքում «ուղևորի աչքերին այնչափ շքեղ, այնպիսի մեծասքանչ, այն աստիճանի վսեմ տեսարաններ են բացւում, որ աշխարհիս և ոչ մէկ կողմն ոչ կայ և ոչ տեսնւած է»։ Յատուկ դորա համար Նորուեգիայի Դրոնթհայմ ծովափեայ քաղաքից չաբաթը երկու անդամ մեկնող, ամենայն պատրաստութիւններով կատարեալ ամրացրած շոգենաւ է կանգնած։ Եւ եթէ դորա վերայ աւելացնելու լինենք, որ այդ աքանչելի ուղևորութիւնը, այսինքն ութ օրուայ երթևեկը առաջնակարգ ուղևորի համար՝ սնունդը և ցամաքային շրջագայութիւններն միասին հաշւած, նստում է միայն մի 100 ռուբլի և որ ամբողջ նաւագնացութեան ժամանակ ծովային հիւանդութիւնից ամենևին երկիւղ չկայ,—այն ժամանակ հասկանալի կը լինի, որ ներկայ գրքոյկը, նաև հայերէն լեզուով հրատարակւած, բացի ընդհանուր գրական հետաքրքրութիւնից, իբրև մի գեղեցիկ նկարագիր աշխարհքիս մի շատ աքանչելի կողմի, ունի նաև իւր գործնական նշանակութիւնը՝ ծառայել որպէս ճանապարհորդական ուղեցոյց։

Ն.*